

ԱՌԱՔԵԼ ՊԵՅ ԿՈՒՍՄԱԿԱՆ.

Օրագրիս մէջ այնչափ առիւ յիշած էինք ու մեր ուրախութիւնը յայտնած Վսեմափայլ Առաքել Պէյին փառացը վրայ, որ երկու տարիէ իվեր Խարբում, Սուտան եւ Ֆեզողլու գաւառաց ընդհանուր կուսակալ էր կարգուած, եւ իւր կենցաղագիտական մեծ հանձարովը ամենայն ճարտարութեամբ եւ պատուով կկառավարէր իւր գաւառները, ու եզրիպտոսի փոխարքայութեանը մեծագոյն ու ճարտարագոյն պաշտօնակալաց մէկը կհամարուէր :

Այսօր մեր մեծ տրտմութիւնը կյայտնեմք մեր համազգի իշխանին տրտմալի մահագոյժն առնելով : Այս կորուստը այնչափ աւելի ցաւալի է՝ որչափ աւելի փառաւոր էր մեզ եւ պանծալի տեսանել յանձն նորազայկազն ոք յայն բարձրութիւն ժամանեալ՝ յոր իրմէն առաջ ոչ ոք իբրիստոնէից ելեր էր երբեք. եւ այնչափ աւելի մեծ է այս կորուստը՝ որչափ աւելի մեծ էին այն ակնկալութիւնները զոր իւր առոյգ երիտասարդութեանը մէջ կուտար իրեն եւ համազգեացս Հայկազանց :

« Սուտանայ կուսակալ Առաքել Պէյին մահուան լուրն ընկալաք : Այս բարձրաստիճան պաշտօնակալը Հայեր ազգաւ. իւր ձեռքն յանձնուած գաւառին իմաստուն կառավարութեամբը մեծ պատիւ ստացաւ, եւ Սաիտ փաշա իւր ըրած ընտրութեանը վրայ մեծապէս զոն եղաւ : Առաքել Պէյ հրաման էր ընդունած որ Գանիրէ գալ խտեսութիւն եղբորը, Նուպար Պէյի՝ որ եզրիպտական անցքին վերատեսուէն է : Առաքել Պէյ վախճանեցաւ. բանջ հիւանդութեամբ : Այս կորստեան դժուարաւ պիտի տեղը լեցուի : »  
(*La Presse d'Orient.*)

ARAKEL BEY, GOUVERNEUR ARMÉNIEN.

Nous avons eu plusieurs fois occasion d'exprimer notre joie de la gloire de S. E. Arakel-Bey, depuis deux ans élevé à la dignité de gouverneur des provinces de Kartoum, Soudan et Fezoghlu. Grâce à de grands talents politiques, il administrait, à son honneur et avec une grande habileté les contrées confiées à ses soins et il passait pour un des ministres les plus éclairés et les plus remarquables du vice-roi d'Egypte.

Aujourd'hui nous ne pouvons qu'exprimer nos regrets amers en apprenant la mort déplorable de notre prince arménien. C'est une perte d'autant plus regrettable qu'il était plus glorieux pour nous, ses frères, de voir en sa personne un Arménien élevé à une hauteur qu'aucun chrétien n'avait atteinte avant lui ; une perte d'autant plus grande, que malgré sa jeunesse Arakel-Bey donnait les plus grandes espérances pour lui et pour sa nation.

« Nous avons appris la mort d'Arakel Bey, gouverneur de Sennaar. Ce haut fonctionnaire était Arménien ; la manière sage dont il a administré la province qui lui avait été confiée, lui a fait le plus grand honneur. Saïd Pacha a eu lieu de s'applaudir de son choix. Arakel Bey se rendait au Caire après avoir obtenu un congé pour aller voir son frère, Nubar Bey, directeur du transit égyptien : il a succombé à la dysenterie. Cette perte sera difficilement réparée ».  
(*La Presse d'Orient.*)

## ՀԱՅԿԱԶՆԱՆԷՔ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ.

Տաճկաստանի Հայկազանց մէջ բանի մը տարիէ իվեր նշանաւոր կտեսնեմք Նիկոմիդիոյ Հայկազունը իրենց ազգասիրական եռանդեամբն ու յառաջադիմութեան ջանիւր : Կլսեմք որ մէջերնին ամենագովելի փոյր մը կայ միաբանական եւ եղբայրսիրական ոգոյ. մեծըն ու պզտիկ առ. հասարակ հարուստն եւ աղքատ, Եկեղեցականն եւ աշխարհական՝ նպատակ դրած են իրենց ընտիր գաղափարներէն պայծառութիւնը, որուն հասնելու համար գեղեցիկ միջոցներու ալ ձեռք գարկած են, որ Է ազգասիրական ընկերութիւն մը կազմել՝ որ ջանայ ոչ միայն անշէջ պահել իրենց եղբարցն եւ ընկերաց սրտին մէջ հայրենասիրութեան եռանդուն բոցը, հապա նաեւ ինոյն հուր բոցավառ.

նաեւ իրենց որդւոցը եւ յաջորդացը սիրտը վառեն եւ բոբբոքեն, որպէս զի իրենց հայրենի անուանը հետ ժառանգեն նաեւ հարցն հայրենասէր ոգին :

Այս բանիս համար ընթերցասիրաց ընկերութիւն մը հաստատած են՝ որ մատենից բանգարան մը եւ *Լուսաւորչեան* անուամբ դպրոց մը կծաղկեցընէ, ընդ հովանեաւ. պաշտպանութեան ազգասէր Առաջնորդին Տէառն Ստեփանոս ծայրագոյն Վարդապետի Մաղարեանց, որ իւր հոգեւոր որդւոցը յառաջադիմութիւնն ու զարգացումը իրեն ուրախութիւն ու վայելքն ըրած՝ կաշխատի անոնց հետ եւ զանոնք կբաշտարէ միշտ :

Հետեւեալ համակը աւելի լաւ կհանգցընէ ոչ միայն Ընթերցասիրաց ընկերութեան գեղեցիկ նպատակը՝ հապա մանաւանդ ազնուախոն ոգին ու ազգասիրա-